# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2018թվականի N 32-Ա

## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 28-Ա,ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 29-Ա,ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի ղեկավարի 2018թվականի հունիսի 25-ի <<Նախագծման թույլտվություն տալու մասին>>N28-Ա, հունիսի 26-ի<<Նախագծման թույլտվություն տալու մասին>> N29-Ա, հունիսի 28-ի<<Շինարարության թույլտվություն տալու մասին>>N31-Ա որոշումների մեջ կատարել փոփոխություն.
1)որոշումների նախաբանում <<Տեղական ինքնակառավարման մասին>> բառերից հետո գրված <<Հայաստանի Հանրապետության>> բառերը հանել:
1.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. հուլիսի 9
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2018թվականի N 33-Ա

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման դրույթներով՝որոշում  եմ.

1.Գեղադիր համայնքի  սեփականատեր  Արմինե Շոթայի Հարությունյանին  տալ նախագծման թույլտվություն(ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով  իրեն պատկանող Գեղադիրի 4-րդ փողոցի 11/1 հասցեում  բնակելի տուն և պարիսպ կառուցելու նախագծային փաստաթղթերը սահմանված կարգով համաձայնեցնելու  համար:
2.  Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2018թվականի <<Նախագծման թույլտվություն տալու մասին>>N29-Ա որոշումը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում  Ա.Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. հուլիսի 12
գ.Գեղադիր

*Ձև N 1-2*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Կոտայքի մարզ Գեղադիր համայնք

(մարզը, համայնքը)

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
# (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 02 « 12 » հուլիս 2018թ.

Օբյեկտ Բնակելի տան և պարսպի կառուցում միջին ռիսկայնության II կատեգորիա, աշխատանքային նախագիծ

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն) նախագծային փաստաթղթերի մշակման համար:

Գտնվելու վայրը Կոտայքի մարզ,գ. Գեղադիր , 07-022-0020-0012

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող 4փ.11/1.Հարությունյան Արմինե,ՀՀ Կոտայքի մարզ,գ.Գեղադիր 5փ. 30տ հեռ 091436658

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը` վկայական N 27122014-07-0054,հայտ

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասփոտրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը մինչև 24 ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով` Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է *բնակավայրի, բնակելի կառուցապատման*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 0.26 հա

(հողամասի սահմանները` կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա) անբարենկարգ

3. Հողամասի առկա վիճակը ռելիեֆային, չկառուցապատված

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում` քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները միջհամայնքային նշանակության

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) Համայնքային իրավիճակային հատակագծի

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում` ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր ___Հարևան հողատարածքներ,ճանապարհներ___

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ___չկա___

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ ___Համաձայն գործող նորմաների___

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ — Նախագիծը մշակվել է անշարժ գույքի պետական գրանցման մն վկայականի սահմաններում

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) ___

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) ___

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) ___Մինչև 3-5 մետր___

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) ___0,33___

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անշրանցին) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ___0,34%___

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) 55% և ավելի___

9.7. այլ պահանջներ ___

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ___Համաձայն տրամադրված իրադրության սխեմայի___

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ___

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — Պահանջներ՝ փողոցային ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում — ըստ տեխնիկական պայմանի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում — ըստ տեխնիկական պայմանի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Ըստ տեխնիկական պայմանի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը —

(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ —

12.6. աղբահանություն — անհատական

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — Տարածքից կազմակերպված ջրահեռացման

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — կանաչապատում

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — ՀՀ շին.ստանդարտներին համապատասխան

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ — Ըստ գործող կարգի

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — Համաձայն նորմատիվային պահանջների

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — թեքահարթակների կառուցում անհրաժեշտության դեպքում

19. Շրջակա միջավայրի պահպանում — Բացառել շինարարական թափոններով շրջակա միջավայրի աղտոտումը

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — Համաձայն նախագծի

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — Մինչև մեկ տարի աշխատանքային նախագիծ

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող — Համաձայն ՀՀ կառ N596-Ն որոշման՝ նախագծային կազմակերպության գրավոր երաշխավորագիր

պահանջներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը` հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը` N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման` օրենքով սահմանված պահանջները` հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում` ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ — Նախագիծը համաձայնության ներկայացնել երկու օրինակից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

(ստորագրությունը)

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

(անունը, ազգանունը)

Կ. Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հուլիս 2018թվականի N 34-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի,<<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով՝ որոշում եմ.

1.Քաղաքացի Համլետ և Լիլիթ Պետրոսյանների սեփականությունը հանդիսացող Գեղադիր համայնքի 07-022-0131-0033 կադաստրային համարի 0.0482 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատման համար:

2.Քաղաքացի Համլետ և Լիլիթ Պետրոսյաններին սեփականության իրավունքով պատկանող Գեղադիր համայնքի 07-022-0131-0033 կադաստրային համարի 0482 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե ՝ Գեղադիր համայնք 2-րդ թաղամաս թիվ 4 հասցեն:

3.Առաջարկել Համլետ և Լիլիթ Պետրոսյաններին Գեղադիր համայնքի բյուջեի 900105208178 հաշվին վճարել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքի տարբերությունը՝ 380780 Հայստանի Հանրապետության դրամ:

4.Համայնքի ղեկավարի տեղակալ Մարինե Գրիգորյանին՝

1)սույն որոշման 1-ին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. հուլիս 13
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2018թվականի N 35-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի,$219^{1}$ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Համլետ Նիկոլի Պետրոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Գեղադիր համայնքի 2-րդ թաղամասի 4-րդ հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքեր , որոշում եմ.

1.Քաղաքացի Համլետ Նիկոլի Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ գումարի չափով:
2.Պարտավորեցնել Համլետ Նիկոլի Պետրոսյանին՝
1)դադարեցնել շինարարական աշխատանքները
2)օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում վճարել տուգանքը Գեղադիր համայնքի բյուջեի N 900105208103 հաշվին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. հուլիսի 13
գ.Գեղադիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2018թվականի N 36-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գեղադիր համայնքի 3-րդ փողոցի 8 հասցեի բնակիչ Մայրամ Վալոդի Սաֆարյանի համայնքի ղեկավարին ֆինանսարան օգնություն ստանալու համար ներկայացրած դիմումը՝ որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>>հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել համայնքի բնակիչ Մայրամ Վալոդի Սաֆարյանին՝30 000/երեսուն հազար/ՀՀ դրամ միանվագ օգնություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին վճարումն իրականացնել համայնքի բյուջեի 01 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 հոդվածից երեք աշխատանքային օրյա ժամկետում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. հուլիսի 16
գ.Գեղադիր